ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՎԱՔԸ ԳԱՆԱՅՈՒՄ

Ս/թ. հուլիսի 16—19-ը Գանայում, Լեգոնի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում, տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) Աստվածաբանական Կրթության Հանձնաժողովի (ԱԿՀ) տարեկան ժողովը, որին մասնակցեց նաև նույն հանձնաժողովի գործադիր կոմիտեի անդամ, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը:

Այս հանձնաժողովը ծնունդ է առել 1958 թ. Միջազգային Միսիոներական Խորհրդի Գանայի Ասամբլեայում, «Աստվածաբանական կրթության ֆոնդ» անունով, և մինչև 1975 թ. գործել է Լոնդոնում, հիմնականում նպատակ ունենալով օգնել երրորդ աշխարհի աստվածաբանական կրթությանը:

1975 թ. ԵՀԽ-ի Նայրոբիի Ասամբլեայում ծրագրվեց և 1976 թ. ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի տարեկան ժողովում որոշվեց, որ «Աստվածաբանական կրթության ֆոնդ»-ը դառնա ԵՀԽ-ի առանձին հանձնաժողով: 1977 թ. այն փոխադրվեց Ժնև և վերանվանվեց «Աստվածաբանական կրթության հանձնաժողով»: Եթե նախկին «Աստվածաբանական կրթության ֆոնդ»-ի նպատակն էր ֆինանսապես օգնել երրորդ աշխարհի աստվածաբանական կրթության զարգացմանը, ապա նոր՝ ԱԿՀ-ի նպատակները ավելի են ընդլայնվում: ԱԿՀ-ի նախկին տնօրեն վերապատվելի Ահարոն Սափսյանի բառերով ասած, հանձնաժողովը «պետք է աշխատի նորոգել բոլոր 6 աշխարհամասերի աստվածաբանական կրթությունը, այդ թվում և հյուսիսային կիսագնդի»: Եվ իրապես, եթե երրորդ աշխարհը կարիք ունի նյութական օգնության, ապա հյուսիսային կիսագունդը կարիք ունի երրորդ աշխարհի փորձին:

ԱԿՀ-ն այսօր ԵՀԽ-ի Գ միության 5 հանձնաժողովներից մեկն է: 1983 թ. Վանկուվերում գումարված Զ ասամբլեան Գ միությանը հանձնարարել է հետևյալ 4 ընդհանուր ծրագրերը.

ա. Էկումենիկ ուսուցում (քրիստոնյան, իբրև յուրահատուկ դավանանքի և պատմա-մշակութային մի ուրույն միջավայրի անհատ, ինչպե՞ս կարող է միաժամանակ լինել Տիեզերական Եկեղեցու անդամը):

բ. Վերանորոգում:

գ. Ավելի գործոն մասնակցություն Եկեղեցու կյանքին (ոչ միայն հոգևորականները, այլ նաև աշխարհականները, յուրաքանչյուրը ըստ իր կարողությունների):

Այս ծրագրերի իրագործման ճանապարհին 1985 թ. ապրիլի 14—18-ը Մեխիկոյում ԱԿՀ-ը կազմակերպեց մի սեմինար «Աստվածաբանություն ժողովրդի կողմից» թեմայով, հիմնականում ուսումնասիրելու համար Լատինական Ամերիկայի աստվածաբանական արդի ուղղությունները:

Այս տարի ԱԿՀ-ը կազմակերպեց մի այլ սեմինար, «Ո՞ւր ես գնում» ընդհանուր վեր-

նագրով, ուսումնասիրելու համար Աֆրիկայի աստվածաբանական արդի ուղղությունները և խնդիրները: Այս սեմինարը տեղի ունեցավ Գանայում, Լեգոնի համալսարանում, հուլիսի 20—26-ը, ԱԿՀ-ի տարեկան ժողովից անմիջապես հետո:

ԱԿՀ-ը իր տարեկան ժողովում քննարկեց հանձնաժողովի անցյալ տարվա գործունեությունը, հաստատեց Գ աշխարհի աստվածաբանական կրթությանը նախատեսված նյութական օգնության նախահաշիվները և ծրագրեց հանձնաժողովի ապագա գործունեությունը:

Ապագա ծրագրերի մեջ կարևոր են Արևելյան Եվրոպայի և Լատինական Ամերիկայի Եկեղեցիների աստվածաբանների հանդիպումը, որը նախատեսված է անցկացնել 1988 թվականին Արևելյան Եվրոպայում:

ԵՋՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ